ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գրիբոյեդով, , griboyedov.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 1

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

Համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի ավագանու թիվ 1 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԱՐՏԱՇ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԹԵՄՈՒՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ՅԱՂՈՒԲՅԱՆ ԱՐՏԱԿ

ՆԱՋԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՀԱԿՅԱՆ ԷԴԳԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021թ. հունվարի 19
գ. Գրիբոյեդով

1

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գրիբոյեդով
համայնքի ավագանու
2021թվականի հունվարի 19-ի
N 1 որոշման

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ

1. Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 19-ի թիվ 1 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 29-ի N80-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:

զեկ. / Վ. Գրիգորյան/

Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Քեշիշ-Ղուկասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնք
<<, Արմավիրի մարզ, գ.Գրիբոյեդով, , griboyedov.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 2-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N80-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ մասերով, 33-հոդվածի 4-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով, 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թվականի դեկտեմբերի 24-ի N2183-Ն որոշմամբ հաստատված հավելված 2-ը, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության գլխավոր քարտուղարի 2021թվականի հունվարի 15-ի N 06/27.4/550-2021 գրությամբ պետական փորձագիտական եզրակացությունը և ամփոփաթերթը.

Համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի 2021թվականի բյուջեն հաստատելու մասին>> N80-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԱՐՏԱՇ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԹԵՄՈՒՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ՅԱՂՈՒԲՅԱՆ ԱՐՏԱԿ

ՆԱՋԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՀԱԿՅԱՆ ԷԴԳԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021թ. հունվարի 19
գ. Գրիբոյեդով

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գրիբոյեդով
համայնքի ավագանու
2021 թվականի հունվարի 19-ի
N 2 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 80-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ

1. Բյուջեի եկամուտների մասով

1) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հատկացված կապիտալ սուբվենցիան՝ 13482.91 հազ. ՀՀ դրամ ավելացնել ֆոնդային բյուջեի եկամուտների մասում «Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ /սուբվենցիաներ/» տողում՝ Գրիբոյեդով համայնքի Զարենցի փողոցի ասֆալտապատման աշխատանքների պայմանագրային գնի 45%-ի մասով՝ որպես պետական աջակցության ցուցաբերում և նախատեսել՝

Բաժին 01 6 1 5113 հոդվածին

2. Ծախսային մասով

1) բաժին 01 6 1 հոդված 5113-ին ավելացնել 13482.91 հազ. ՀՀ դրամ
2) բաժին 09 1 1 հոդված 4511-ից 450.0 հազ. ՀՀ դրամ տեղափոխել բաժին 09 1 1 հոդված 4251
3) բաժին 09 1 1 հոդված 4511-ից 540.0 հազ. ՀՀ դրամ տեղափոխել բաժին 09 1 1 հոդված 4269

3. Որոշման հավելվածը լրացնել նոր բովանդակությամբ. 4.1-ին և 5.1-ին կետերով՝

« 4.1 Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի 2021 թվականի բյուջեի ազատ մնացորդը՝ 5735.560 հազ. ՀՀ դրամով:

5.1 Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի 2021 թվականի բյուջեի ազատ մնացորդը՝

1) Վարչական բյուջեի մնացորդը՝ 5595964.5 ՀՀ դրամ և
2) Ֆոնդային բյուջեի մնացորդը՝ 139595.9 ՀՀ դրամ,

ընդամենը՝ 5735.560 հազ ՀՀ դրամ, որից ֆոնդային բյուջե ուղղել 5735.560 հազ. ՀՀ դրամ և տեղաբաշխել.

բաժին 01 1 1 հոդվ. 5122-ին հատկացնել 500.0 հազ. դրամ
բաժին 01 6 1 հոդվ. 5112-ին հատկացնել 400.0 հազ. դրամ
բաժին 01 6 1 հոդվ. 5113-ին հատկացնել 3715.56 հազ. դրամ
բաժին 01 6 1 հոդվ. 5129-ին հատկացնել 100.0 հազ. դրամ
բաժին 01 6 1 հոդվ. 5134-ին հատկացնել 200.0 հազ. դրամ
բաժին 08 2 3 հոդվ. 5122-ին հատկացնել 750.0 հազ. դրամ
բաժին 09 1 1 հոդվ. 5122-ին հատկացնել 70.0 հազ. դրամ:»:

Ավագանու անդամներ՝

Արզումանյան Ա.

Գրիգորյան Գ.

Յաղուբյան Ա.

Թեմուրյան Գ.

Նազարյան Ս.

Սահակյան Է.

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N80-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N2-Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի ավագանու 2021 թվականի թվականի 19-ի << Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 29-ի N80-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին>> N2-Ն որոշման նախագծի անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ այն ուղղված է պետության կողմից աջակցության ցուցաբերման՝ կապիտալ սուբվենցիայի տրամադրման գործընթացը ապահովելու և համայնքի բյուջեի եկամտային մասում նախատեսելու, ինչպես նաև համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը նշված ուղղություններով բաշխելու համար: Այն ապահովում է նաև <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջների կատարումը և ուղղված է համայնքի զարգացմանը նպաստելուն՝ բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետայյին գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594015
Էլ. փոստ suren.galstyan@justice.am

15.01.2021թ N 06/27.4/550-2021

Ձեր N _____

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Գրիգորյան,

Ի պատասխան Ձեր 2021 թվականի հունվարի 8-ի թիվ 01 գրության՝ կից ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 80-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

1/15/2021

X

Suren Galstyan

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող՝ Արաքսյա Առաքելյան
Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 59-41-28

15.01.21

ՊԵՏԱԿԱՆ ՖՈՐԶԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 80-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին»ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

1. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 80-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ավագանու որոշման նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) հաստատվող հավելվածից անհրաժեշտ է հանել «նախագծի» բառը, քանի որ «ՆԱԽԱԳԻԾ» բառըպետք է գրվի միայն իրավական ակտերի նախագծի առաջին էջի վերևի աջ անկյունում՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի:

2. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում կատարվող փոփոխությունների կամ լրացումների ձևը (տեսքը) պետք է համապատասխանի փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի ձևին (տեսքին):Ուստի, հարկ ենք համարում ընդգծել, որ եթե ներկայացված նախագծով կատարվում են բյուջեի եկամուտների կամ ծախսերի ավելացումներ կամ նվազեցումներ, ապա դրանց վերաբերյալ նախագծով առաջարկվող կարգավորումները չեն կարող ինկորպորացվել, այլ կերպ ասած՝ արտացոլվել հիմնական իրավական ակտում, այսինքն՝ տվյալ համայնքի բյուջեում, եթե տվյալ փոփոխությունները կամ լրացումները չկատարվեն տվյալ բյուջեն հաստատելու վերաբերյալ որոշման հավելվածներում՝ ներկայացվող նախագծի հավելվածների տեսքով:

Ելնելով վերոգրյալից Նախագծի հավելվածում կատարվող փոփոխություններն անհրաժեշտ է ներկայացնել աղյուսակի տեսքով:

Իրավական ակտերի
փորձաքննության գործակալության պետ՝

հ/հ	Առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացությունը	Կատարված փոփոխությունը
1.	1	2	3	4
1.	ՀՀ արդարադատության նախարարություն	1.Նախագծի հավելվածում կատարվող փոփոխություններն անհրաժեշտ է ներկայացնել աղյուսակի տեսքով համաձայն <<Նորմատիվ իրավական ակտերի 34-րդ հոդվածի 3-րդ մասի:	Առաջարկություններն ընդունված են ի գիտություն	Առաջարկությամբ ներկայացված խմբագրումները ու թերությունները կատարված են

2021 թվականի հունվարի 19